ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով հանդերձանքի ձեռքբերման նպատակով ձևավորված ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՀՁ-18/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 10.07.2018թ. ժամը 11-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Ն. Վարդանյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Մամյանը, Լ.Հովհաննիսյանը, Մ.Անտոնյանը, Ա.Թումանյանը և քարտուղար Ռ.Խաչատրյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՀՁ-18/4» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ** (ք. Երևան, Զ. Սարկավագի 157)
2. **«Դերձակ» ՍՊԸ** (ք. Երևան, Ավան, Քուչակ 16/2)
3. **«Եվրոտեքս» ՍՊԸ** (Գրիգոր Լուսավորչի փողոց, շ. 43)
4. **«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ** (ք. Երևան, Դրոյի 8, բն. 4)

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան :

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

Հ/Հ	Անվանում	Քանակ	Նախահաշվային գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/			
				«ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ	«Դերձակ» ՍՊԸ	«Եվրոտեքս»ՍՊԸ*	« ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ
1	վերնաշապիկներ	1272	4134000	3339000	4706400	7568400	-

2	վերնաշապիկներ	100	425000	345500	499500	640000	-
3	վերնաշապիկներ	100	325000	262500	499000	595000	-
4	վերնաշապիկներ	100	325000	262500	499000	595000	-
5	վերնաշապիկներ	100	425000	345500	499500	640000	-
6	վերնաշապիկներ	1272	4134000	3339000	5724000	7568400	-
7	համազգեստ	5	685000	562500	-	-	-
8	համազգեստ	50	4042500	-	-	-	2333000
9	ուսադիր	10	296497	247000	-	-	
10	ուսադիր	30	450000	375000	-	-	

*** Հանդիսանում է ԱԱՀ չվճարող:**

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը որոշեց.

1.1 Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

1,2,3,4,5,6,7,9,10 չափաբաժինների համար՝ **«ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ** -ին:
8-րդ չափաբաժնի համար **« ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ**-ին:

1.2 Ընթացակարգի **7,8,9,10** չափաբաժինների համար **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակիցներ չկան:

1.3 Ընթացակարգի **1-6** չափաբաժինների համար **«Դերձակ» ՍՊԸ**-ի և **«Եվրոտեքս» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված գնային առաջարկի ինքնարժեք և ԱԱՀ հանրագումարը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

2. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ներկայացվելու օրվանից հաշված մինչև 10 աշխատանքային օրվա ընթացքում, 15.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետերի՝ առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,
2. Համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Ն. Վարդանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա.Մամյան

_____ Լ.Հովհաննիսյան

_____ Մ.Անտոնյան

_____ Ա.Թումանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ.Խաչատրյան